գրանցված 22.02.2017թ.
կոդ՝ 10617091

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» փետրվարի 2017թ. N43-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 5 -Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1 . Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2014 թվականի հուունվարի 17-ի <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի մայիսի 13-ի N 85-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 5-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ներքին գործավարության կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները .

1) կարգի 55-րդ կետում՝

ա. << մեկ>> բառը փոխարինել <<երկու >>բառով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Սահմանված ժամկետում կարծիք չներկայացնելու դեպքում, համակատարողների կարծիքը համարվում է դրական և հավաքն իրականացնող ստորաբաժանման

ղեկավարը պատրաստած գրությունը կարգով սահմանված ընթացակարգով համաձայնեցնում է համակատարողների հետ>>,

2) կարգի 60-րդ կետի՝

ա.1-ին ենթակետում 1-օրյա բառից հետո լրացնել <<և 2-օրյա>> բառերը.

բ. 2-րդ ենթակետում լրանալու բառից հետո լրացնել <<նախորդ>> բառը.

գ. 3-րդ ենթակետում <<ժամկետի նախորդ օրը>> բառերը փոխարինել <<ժամկետից երկու օր առաջ>>բառերով և <<լրանալու օրը>> բառերը փոխարինել <<լրանալուց երկու օր առաջ՝>> բառերով:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ